ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 04.08.2022թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/35-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «22» «11» 2022թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Ֆոտոն ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 04.08.2022թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/35-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրով նախատեսված 100 հատ գրապահարաններից 75 հատ գրապահարանների մասով 2 700 000 (երկու միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով և 150 հատ գրասեղաններից 34 հատ գրասեղանների մասով 800 326 (ութ հարյուր հազար երեք հարյուր քսանվեց) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված 100 հատ գրապահարաններից 15 հատ գրապահարանները և 150 հատ գրասեղաններից 16 հատ գրասեղանները արխիվի դարակաշարերով փոխարինման անհրաժեշտությունը և այդ նպատակով 910 000 (ինը հարյուր տասը հազար) ՀՀ դրամի չափով նախատեսված ֆինանսական միջոցները՝ Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի 3.1 կետում 7 130 850 (յոթ միլիոն մեկ հարյուր երեսուն հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ բառերը փոխարինել 7 124 226 (յոթ միլիոն մեկ հարյուր քսանչորս հազար երկու հարյուր քսանվեց) ՀՀ դրամ բառերով,

1.2. Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ում.

ա) «ընդհանուր գինը/ՀՀ դրամ» սյունակում 1-ին չափաբաժնի մասով՝ «3 600 000» թիվը փոխարինել «3 060 000» թվով, իսկ 4-րդ չափաբաժնի մասով՝ «3 530 850» թիվը փոխարինել «3 154 226» թվով,

բ) «ընդհանուր քանակը» և «ենթակա քանակը» սյունակներում 1-ին չափաբաժնի մասով՝ «100» թիվը փոխարինել «85» թվով, իսկ 4-րդ չափաբաժնի մասով՝ «150» թիվը փոխարինել «134» թվով,

1.3. Հաստատել արխիվի դարակաշարերի ձեռքբերման նպատակով կազմված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ»-ը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

1.4. Հաստատել արխիվի դարակաշարերի ձեռքբերման նպատակով կազմված «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 2-ի:

1.5. Հաստատել Պայմանագրով և Համաձայնագրով սահմանված ապրանքների ձեռքբերման նպատակով կազմված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 3-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 4 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1, N 2, N 3 հավելվածները հանդիսանում են N 2 Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***Ֆոտոն ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Ռոստոմի 58
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 90036001
Հ/Հ՝ 900011005841	Հ/Հ՝ 16044050085000
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	Տնօրեն՝ Ն. Պետրոսյան
/ստորագրություն/Կ.Տ	/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 1
«22» «11» 2022թ. կնքված N 2 համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ապրանքի			
հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	39131200/1	Արխիվի դարակաշար	Դարակաշարը բաղկացած է 2 մասից: Առաջին դարակաշարը՝ պատից կախվող, պատրաստված 18մմ հաստությամբ լամինացված ԴՍՊ-ից, չափերը 288(L)x40(Խ)x80(Բ) սմ, բաժանված 3 առանձին մասի՝ յուրաքանչյուրը 2-ական դռներով, ներսում 2 դարակ: Որակյալ ծխնիներով և երկաթյա բռնակներով, պատից կախելու հարմարությամբ, ԴՍՊ-ի բոլոր բաց մասերը եզրապատված 0.4մմ հաստությամբ ՊՎՍ-ով: Երկրորդ դարակաշարը՝ ներքևում պատրաստված 18մմ հաստությամբ լամինացված ԴՍՊ-ից, չափերը 288(L)x50(Խ)x130(Բ)սմ, բաժանված 6 առանձին մասերի՝ յուրաքանչյուրը պետք է ունենա 4 քաշովի դարակ, բարձրորակ գնդիկավոր սողնակների վրա, համահունչ գույնի մետաղական բռնակներով, դարակների ներսում հատուկ մետաղական հարմարություն՝ նախատեսված թղթապանակների պահպանման համար: ԴՍՊ-ի բոլոր բաց մասերը եզրապատված 0.4մմ հաստությամբ ՊՎՍ-ով: Բոլոր բաց ամրացումները փակված են համապատասխան գույնի կպչուն ժապավենով: Գույները և արտաքին տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ:
2	39131200/2	Արխիվի դարակաշար	Դարակաշարը բաղկացած է 2 մասից: Առաջին դարակաշարը՝ պատից կախվող, պատրաստված 18մմ հաստությամբ լամինացված ԴՍՊ-ից, չափերը 288(L)x40(Խ)x80(Բ) սմ, բաժանված 3 առանձին մասի՝ յուրաքանչյուրը 2-ական դռներով, ներսում 2 դարակ: Որակյալ ծխնիներով և երկաթյա բռնակներով, պատից կախելու հարմարությամբ, ԴՍՊ-ի բոլոր բաց մասերը եզրապատված 0.4մմ հաստությամբ ՊՎՍ-ով: Երկրորդ դարակաշարը՝ ներքևում պատրաստված 18մմ հաստությամբ լամինացված ԴՍՊ-ից, չափերը 288(L)x60(Խ)x130(Բ) սմ, բաժանված 6 առանձին մասերի՝ յուրաքանչյուրը պետք է ունենա 4 քաշովի դարակ, բարձրորակ գնդիկավոր սողնակների վրա, համահունչ գույնի մետաղական բռնակներով, դարակների ներսում հատուկ մետաղական հարմարություն՝ նախատեսված թղթապանակների պահպանման համար: ԴՍՊ-ի բոլոր բաց մասերը եզրապատված 0.4մմ հաստությամբ ՊՎՍ-ով: Գույները և արտաքին տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ:
3	39131200/3	Արխիվի դարակաշար	Դարակաշար՝ պատրաստված 18մմ հաստությամբ լամինացված ԴՍՊ-ից: Բաղկացած 3 առանձին մասերից՝ 4-ական քաշովի դարակներով, յուրաքանչյուրի չափերը՝ 48(L)x60(Խ)x130(Բ)սմ: Դարակների ներսում թղթապանակների և փաստաթղթերի պահպանման համար նախատեսված հատուկ մետաղական հարմարություն, սողնակները բարձր որակի գնդիկավոր, բռնակները մետաղական: ԴՍՊ-ի յուրաքանչյուր բաց մաս փակվում է համահունչ գույնի ՊՎՍ-ով: Գույները և արտաքին տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ:

ԳՆՈՐԴ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005841
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Ֆոտոն ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռոստոմի 58
ՀՎՀՀ՝ 90036001
Հ/Հ՝ 16044050085000
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ն. Պետրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 22 » « 11 » 2022թ. կնքված N 2 համաձայնագրի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի							
հ/հ	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը	ժամկետը*
1	հատ	320000	320000	1	ք. Երևան, Կորյունի 15/1	1	Համաձայնագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օր:
2	հատ	320000	320000	1	ք. Երևան, Կորյունի 15/1	1	Համաձայնագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օր:
3	հատ	270000	270000	1	ք. Երևան, Կորյունի 15/1	1	Համաձայնագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օր:

**Համաձայնագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:*

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005841
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Ֆոտոն ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռոստոմի 58
ՀՎՀՀ՝ 90036001
Հ/Հ՝ 16044050085000
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ն. Պետրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 22 » « 11 » 2022թ. կնքված N 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի				
գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում		
		նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
39121520/504	Գրապահարաններ	2 700 000	2 700 000	**2 700 000**
39121100/509	Գրասեղաններ	800 326	800 326	**800 326**
39131200/1	Արխիվի դարակաշարեր	320 000	320 000	**320 000**
39131200/2	Արխիվի դարակաշարեր	320 000	320 000	**320 000**
39131200/3	Արխիվի դարակաշարեր	270 000	270 000	**270 000**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005841
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Ֆորոն ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռոստոմի 58
ՀՎՀՀ՝ 90036001
Հ/Հ՝ 16044050085000
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ն. Պետրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ